

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մարտի 2011 թվականի N 281-Ն

**ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՄ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԾ՝ ԴՐԱՆՑ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՄ ՄԵԾԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԱՅԴ ԳՈՐԾՈՒՄԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ, 17-րդ հոդվածի 2-րդ և 43-րդ հոդվածի 2-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել՝

1) թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտադրության գործունեության իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտադրության գործունեության իրականացման լիցենզիաների ձևերը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի իրականացման գործունեության իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի իրականացման գործունեության իրականացման լիցենզիաների ձևերը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Սույն որոշմամբ հաստատված կարգերով՝ լիազորված մարմնի իրավասությունները վերապահել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի արտադրություն կամ պատրաստում ու թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի արտահանում կամ ներմուծում» գործունեությունների իրականացման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» N 1656-Ն որոշումը:

4. Սահմանել, որ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը տրամադրված թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի արտադրության, ներմուծման, արտահանման լիցենզիաները գործում են մինչև դրանցում նշված գործողության ժամկետի ավարտը և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի պրեկուրսորների արտադրության համար՝ թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի արտադրության լիցենզիաները ենթակա են վերաձևակերպման՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում:

5. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի արտադրության լիցենզիա ունեցող անձինք, ինչպես նաև սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտադրության լիցենզիա ստացած անձինք իրենց գործունեությունը պետք է համապատասխանեցնեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 25-ի N 1603-Ն որոշմամբ հաստատված դեղերի պատշաճ արտադրական գործունեության պահանջներին՝ մինչև 2013 թվականի հունվարի 1-ը:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

S. Սարգսյան

2011 թ. մարտի 28  
Երևան

## Կ Ա Ր Գ

### ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՍ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԾ՝ ԴՐԱՆՑ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

#### Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից (այսուհետ՝ լիցենզավորող մարմին) թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտադրության գործունեության իրականացման լիցենզիա (այսուհետ՝ լիցենզիա) ստանալու համար Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին (այսուհետ՝ լիազորված մարմին) դիմած կազմակերպություններ ներկայացվող պահանջները և պայմանները:

2. Լիցենզիան տալիս է լիցենզավորող մարմինը՝ բարդ ընթացակարգով՝ մինչև երեք տարի ժամկետով, օրենքով և սույն կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում:

*(2-րդ կետը խմբ. 06.03.14 N 239-Ն)*

3. Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտադրությամբ կարող են զբաղվել իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

4. Սույն կարգի համաձայն տրված լիցենզիաները գործում են միայն լիցենզիայում նշված վայրում:

5. Լիազորված մարմինը սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում՝ սահմանված կարգով լիցենզավորող մարմնի քննարկմանն է ներկայացնում նշված փաստաթղթերն ու լիցենզավորող մարմնի համապատասխան որոշման նախագիծը՝ այն 5-օրյա ժամկետում նախապես համաձայնեցնելով շահագրգիռ պետական մարմինների հետ: Լիցենզավորող մարմինը նշված փաստաթղթերի հիման վրա ընդունում է համապատասխան որոշում:

*(5-րդ կետը խմբ. 06.03.14 N 239-Ն)*

5.1. Լիցենզիա տալու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով: Ընդ որում՝

1) լիցենզավորող մարմինը լիցենզիան կամ դրա կրկնօրինակը տալու, լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու, լիցենզիան վերածնակերպելու, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու մասին որոշման ընդունումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին պատշաճ ձևով տեղեկացնում է հայտատուին: Տեղեկացմամբ հայտատուն պետք է նախազգուշացվի սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված հետևանքների մասին:

2) հայտատուն սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ծառայության մատուցման համար օրենքով սահմանված պետական տուրքը պարտավոր է վճարել ոչ ուշ, քան լիցենզիան կամ դրա կրկնօրինակը տալու, լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու, լիցենզիան վերածնակերպելու, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու մասին հայտը բավարարելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

3) հայտատուն լիցենզավորող մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ կարող է չներկայացնել: Հայտատուի կողմից պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացվելու դեպքում լիցենզավորող մարմինը լիցենզիան կամ դրա կրկնօրինակը տալու, լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու, լիցենզիան վերածնակերպելու, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու մասին հայտը բավարարելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին և հայտատուին պատշաճ ձևով հանձնում կամ ուղարկում է լիցենզիան, լիցենզիայի կրկնօրինակը, ժամկետը երկարաձգված լիցենզիան, վերածնակերպված լիցենզիան, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու լիցենզիան, ինչպես նաև դրանց վերաբերյալ համապատասխան որոշումները:

4) սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետում հայտատուի կողմից պետական տուրքը չվճարվելու դեպքում համապատասխան հայտը մերժվում է՝ պետական տուրքը չվճարելու հիմքով: Հայտը մերժվելուց հետո լիցենզավորող մարմնի որոշումը չեղյալ է

ճանաչվում:

**(5-1-ին կետը լրաց. 06.03.14 N 239-Ն)**

6. Լիազորված մարմինը լիցենզավորող մարմնի՝ լիցենզիա տալու մասին որոշումը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում լիցենզավորված անձին է հանձնում լիցենզիան՝ լիազորված մարմնի լիցենզավորման գործակալության պետի ստորագրությամբ և այդ մարմնի՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կնիքով:

**(6-րդ կետը խմբ. 07.06.12 N 717-Ն)**

7. Լիազորված մարմինն իրականացնում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ լիցենզավորող մարմնի բոլոր լիազորությունները՝ բացառությամբ լիցենզիա տալու կամ լիցենզիա ստանալու մասին հայտը մերժելու, լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու կամ լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման մասին հայտը մերժելու, լիցենզիան վերաձևակերպելու, լիցենզիան վերաձևակերպելու մասին հայտը մերժելու, գործունեության իրականացման վայրի փոփոխման կամ այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու մասին հայտը մերժելու կամ բավարարելու, լիցենզիայի գործողությունը կասեցնելու, լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը քննելու և որոշումներ ընդունելու լիազորությունների:

8. Լիցենզիան վերաձևակերպվում է, և դրա գործողությունը կասեցվում ու դադարեցվում է օրենքով սահմանված կարգով:

## **II. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

9. Հայտատուն թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտադրության գործունեության իրականացման լիցենզավորման համար օրենքի համաձայն լիազորված մարմին է ներկայացնում՝

1) լիցենզիա ստանալու մասին հայտը՝ համաձայն N 1 ձևի.

2) **(ենթակետն ուժը կորցրել է 15.09.11 N 1317-Ն)**

3) լիցենզիա ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը, կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը՝ նախօրոք վճարված լինելու դեպքում (ներկայացվում է հայտատուի ցանկությամբ).

4) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման կամ լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված անշարժ գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը.

5) տեղեկանք տարածքների՝ ազդանշանային համակարգով սարքավորված լինելու մասին.

6) «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված ապրանքների, առարկաների, սարքավորումների վերաբերյալ դրական փորձագիտական եզրակացության բնօրինակը.

7) լիցենզավորման ենթակա թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի (թմրադեղեր և հոգեմետ դեղեր) արտադրության դեպքում՝ թմրադեղերի և հոգեմետ դեղերի տեսակն ըստ արտադրվող դեղաձևի, որը պատրաստ է արտադրել, ինչպես նաև թմրադեղերի և հոգեմետ դեղերի ցանկը, որոնք արտադրվում են, կամ նախատեսվում է արտադրել.

8) «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պահանջներին համապատասխանող տեխնոլոգիական սարքավորումներով ապահովվածության մասին փաստաթուղթ (փաստաթղթեր).

9) գործունեության իրականացման վայրում գտնվող պահեստի հագեցվածության մասին տեղեկանք.

10) **(ենթակետն ուժը կորցրել է 07.06.12 N 717-Ն)**

11) Թմրամիջոցները կամ հոգեմետ նյութերը կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորներն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից պահպանվում են լիցենզիայում նշված գործունեության իրականացման վայրում գտնվող պահեստում:

**(9-րդ կետը փոփ. 15.09.11 N 1317-Ն, խմբ., լրաց., փոփ. 07.06.12 N 717-Ն, լրաց., խմբ. 06.03.14 N 239-Ն)**

9.1. Լիցենզիա ստանալու մասին հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անձությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիցենզավորող մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա

ընթացքում հայտատուին առաջարկում է 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները:

**(9-1-ին կետը լրաց. 06.03.14 N 239-Ն)**

10. Հայտատուն թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտադրության համար պետք է ունենա դեղանյութերի և պատրաստի թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի (թմրադեղեր և հոգեմետ դեղեր) համար առանձին պահեստ (բունկեր): Պահեստի դուռը պետք է լինի մետաղյա, պատուհանները՝ վանդակապատված: Պահեստը պետք է ունենա խոնավաչափ և պետք է սարքավորված լինի ազդանշանային համակարգով՝ ձայնային կամ լուսային ազդանշանը պահպանության դիտակետին միացնելով կամ շենքի արտաքին մասին ամրացնելով: Ազդանշանային սարքավորումների էլեկտրասնուցման համակարգը պետք է ունենա պահեստային էլեկտրասնուցման աղբյուր:

11. Թմրամիջոցները կամ հոգեմետ նյութերը կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորներն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից պահպանվում են լիցենզիայում նշված գործունեության իրականացման վայրում գտնվող պահեստում:

**(11-րդ կետը խմբ. 07.06.12 N 717-Ն)**

12. Լիցենզավորված անձինք իրենց գործունեության ընթացքում կարող են զբաղվել Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների պահպանման, տեղափոխման, իրացման, բաշխման, բացթողման, վերամշակման, ուսումնական կամ գիտական նպատակներով օգտագործման գործառույթներով՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պարտադիր պայմանները և պահանջները:

13. Լիցենզավորված անձինք թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտադրության դեպքում մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ը առողջապահության բնագավառի լիազոր մարմին են ներկայացնում նախորդ տարում արտադրված թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների ցանկը և քանակը՝ հաստատված լիցենզավորված անձի կնիքով և ստորագրությամբ:

14. Լիցենզավորված գործունեության ընթացքում լիցենզավորված անձի կողմից լիցենզավորման համար սահմանված պարտադիր պայմանների և պահանջների փոփոխման դեպքում (ներառյալ համապատասխան որակավորում ունեցող մասնագետի, տեխնիկատեխնոլոգիական հագեցվածության փոփոխման) լիցենզավորված անձը 15-օրյա ժամկետում լիազոր մարմնին հայտնում է իրականացված փոփոխության մասին՝ կցելով համապատասխան փաստաթղթերը:

**(14-րդ կետը խմբ. 23.10.13 N 1148-Ն)**

15. Լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն պետք է ներկայացնեն եռամսյակային հաշվետվություններ:

### **III. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՍԹԵՐԸ**

**(III գլուխը լրաց. 07.06.12 N 717-Ն)**

16. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է հետևյալ պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում՝

1) ներկայացված փաստաթղթերը թերի են, կամ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ.

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջներին.

3) իրավաբանական անձն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեությամբ.

4) գործունեության իրականացման համար նախատեսված տարածքը սեփականության կամ վարձակալության կամ ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով չի պատկանում հայտատուին.

5) սույն կարգի 10-րդ կետով սահմանված լիցենզավորման պարտադիր պահանջներին և պայմաններին չհամապատասխանելու դեպքում.

6) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտադրության գործունեության իրականացման դեպքում՝ տարածքների ազդանշանային համակարգով սարքավորված չլինելու դեպքում.

7) դեղերի արտադրության որակի հսկման, ինչպես նաև դրանց մականշման համար

պատասխանատու դեղագետի, դեղաբան-քիմիկոսի որակավորում ունեցող աշխատանքն իրականացնող մասնագետների բացակայության դեպքում.

8) (ենթակետն ուժը կորցրել է 06.03.14 N 239-Ն)

(16-րդ կետը լրաց. 07.06.12 N 717-Ն, փոփ. 06.03.14 N 239-Ն)

17. (կետն ուժը կորցրել է 23.10.13 N 1148-Ն)

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար

Դ. Սարգսյան

Ձև N 1

Հ Ա Յ Տ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՄ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԾ՝ ԴՐԱՆՑ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ  
ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ  
(վերնագիրը խմբ. 06.03.14 N 239-Ն)

1. Իրավաբանական անձի անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը -----  
--

2. Գտնվելու կամ բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում)

3. Իրավաբանական անձի վկայականի պետական գրանցման

համարը

4. Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վկայականի հաշվառման

համարը

5.  Վճարված է պետական տուրք (նշում կատարվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում):

6. Կից ներկայացնում եմ՝

լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման կամ անշարժ գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը,

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից տրված ապրանքների, առարկաների, սարքավորումների վերաբերյալ դրական փորձագիտական եզրակացության բնօրինակը,

լիցենզավորման ենթակա՝ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի (թմրադեղեր և հոգեմետ դեղեր) արտադրության դեպքում՝ թմրադեղերի և հոգեմետ դեղերի տեսակն ըստ արտադրվող դեղաձևի, որը պատրաստ է արտադրել, ինչպես նաև թմրադեղերի և հոգեմետ դեղերի ցանկը, որոնք արտադրվում են կամ նախատեսվում են արտադրել,

տեղեկանք տարածքների՝ ազդանշանային համակարգով սարքավորված լինելու մասին,

տեղեկանք գործունեության իրականացման վայրում գտնվող պահեստի հագեցվածության մասին,

թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց արեկուրսորների արտադրության գործունեության իրականացման լիցենզավորման համար պետական տուրքի վճարման անդորրագիրը, կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը, կամ

անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը (կցվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում, հայտատուի հայեցողությամբ),

թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի (թմրադեղեր և հոգեմետ դեղեր) արտադրության դեպքում՝ տեղեկանք թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի արտադրության որակի հսկման, ինչպես նաև դրանց մակնշման համար պատասխանատու դեղագետի, դեղաբան-քիմիկոսի որակավորում ունեցող մասնագետներով ապահովված լինելու մասին՝ կցելով համապատասխան բարձրագույն մասնագիտական կրթության վկայականների (դիպլոմներ), հետբուհական կրթության վկայականների (հավաստագրեր) պատճենները,

«Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պահանջներին համապատասխանող տեխնոլոգիական սարքավորումներով ապահովվածության մասին փաստաթուղթ (փաստաթղթեր):

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

ազմակերպության տնօրեն  
Ննհատ ձեռնարկատեր)

\_\_\_\_\_ (ստորագրությունը)

\_\_\_\_\_ (անունը, հայրանունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 20 թ.

*(ծնը փողի. 15.09.11 N 1317-Ն, խմբ. 07.06.12 N 717-Ն, 06.03.14 N 239-Ն)*

Ձև N 2

**Հ Ա Յ Տ**

**Լ Ի Ց Ե Ն Ջ Ի Ա Ս Տ Ա Ն Ա Լ ՈՒ Մ Ա Ս Ի Ն**

*(ծնն ուժը կորցրել է 06.03.14 N 239-Ն)*

*(հավելվածը փողի. 15.09.11 N 1317-Ն, խմբ., լրաց., փողի. 07.06.12 N 717-Ն, փողի., խմբ. 23.10.13 N 1148-Ն, խմբ., լրաց., փողի. 06.03.14 N 239-Ն)*

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
մարտի 18-ի N 281-Ն որոշման

Ձև N 1



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Լ Ի Ց Ե Ն Ջ Ի Ա Կ - XX – 000000**

րված \_\_\_\_\_ 20 թ.

ործունեության տեսակը \_\_\_\_\_

րավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը \_\_\_\_\_

ործունեության իրականացման վայրը \_\_\_\_\_

Գործողության ժամկետը՝ \_\_\_\_\_

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ

(ստորագրությունը)

Կ. Տ.  
(ծևր խմբ. 07.06.12 N 717-Ն)

Ձև N 2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԼԻՑԵՆԶԻԱ Կ-XX-000000

րված \_\_\_\_\_ 20 թ.

ործունեության տեսակը \_\_\_\_\_

նհատ ձեռնարկատիրոջ ազգանունը, անունը, հայրանունը և բնակության վայրը \_\_\_\_\_

ործունեության իրականացման վայրը \_\_\_\_\_

ործողության ժամկետը \_\_\_\_\_

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ

(ստորագրությունը)

Կ. Տ.  
(ծևր խմբ. 07.06.12 N 717-Ն)  
(հավելվածը խմբ. 07.06.12 N 717-Ն)

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար

Դ. Սարգսյան

Հավելված N 3  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
մարտի 18-ի N 281-Ն որոշման

**ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՄ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԾ՝ ԴՐԱՆՑ ՊՐԵԿՎՈՒՄՈՐՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՆԵՐՄՈՒԾՄԱՆ  
ԿԱՄ ՄԵԾԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից (այսուհետ՝ լիցենզավորող մարմին) Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտահանման կամ ներմուծման կամ մեծածախ առևտրի իրականացման նպատակով լիցենզիա ստանալու համար Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին (այսուհետ՝ լիազորված մարմին) դիմած կազմակերպություններ (այսուհետ՝ հայտատու) ներկայացվող պայմանները և պահանջները:

2. Լիցենզիան տալիս է լիցենզավորող մարմինը՝ բարդ ընթացակարգով՝ մինչև երեք տարի ժամկետով, օրենքով և սույն կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացվելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում:

**(2-րդ կետը խմբ. 06.03.14 N 239-Ն)**

3. Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների ներմուծմամբ, արտահանմամբ կամ մեծածախ առևտրով կարող են զբաղվել իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

4. Սույն կարգի համաձայն տրված լիցենզիաները գործում են միայն լիցենզիայում նշված վայրում:

5. Լիազորված մարմինը սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում՝ սահմանված կարգով լիցենզավորող մարմնի քննարկմանն է ներկայացնում նշված փաստաթղթերն ու լիցենզավորող մարմնի համապատասխան որոշման նախագիծը՝ այն 5-օրյա ժամկետում նախապես համաձայնեցնելով շահագրգիռ պետական մարմինների հետ: Լիցենզավորող մարմինը նշված փաստաթղթերի հիման վրա ընդունում է համապատասխան որոշում:

**(5-րդ կետը խմբ. 06.03.14 N 239-Ն)**

5.1. Լիցենզիա տալու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով: Ընդ որում՝

1) լիցենզավորող մարմինը լիցենզիան կամ դրա կրկնօրինակը տալու, լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու, լիցենզիան վերաձևակերպելու, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու մասին որոշման ընդունումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին պատշաճ ձևով տեղեկացնում է հայտատուին: Տեղեկացմամբ հայտատուն պետք է նախազգուշացվի սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված հետևանքների մասին.

2) հայտատուն սույն կետի 1-ին ենթակետով սահմանված համապատասխան գործողության համար օրենքով սահմանված պետական տուրքը պարտավոր է վճարել ոչ ուշ, քան լիցենզիան կամ դրա կրկնօրինակը տալու, լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու, լիցենզիան վերաձևակերպելու, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու մասին հայտը բավարարելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում.

3) հայտատուն լիցենզավորող մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ կարող է չներկայացնել: Հայտատուի կողմից պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացվելու դեպքում լիցենզավորող մարմինը լիցենզիան կամ դրա կրկնօրինակը տալու, լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու, լիցենզիան վերաձևակերպելու, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու մասին հայտը բավարարելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին և հայտատուին պատշաճ ձևով հանձնում կամ ուղարկում է լիցենզիան, լիցենզիայի կրկնօրինակը, ժամկետը երկարաձգված լիցենզիան, վերաձևակերպված լիցենզիան, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու լիցենզիան, ինչպես նաև դրանց մասին համապատասխան որոշումները.

4) սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետում հայտատուի կողմից պետական տուրքը չվճարվելու դեպքում համապատասխան հայտը մերժվում է՝ պետական տուրքը չվճարելու հիմքով: Հայտը մերժվելուց հետո լիցենզավորող մարմնի որոշումը չեղյալ է ճանաչվում:

**(5.1-ին կետը լրաց. 06.03.14 N 239-Ն)**

6. Լիազորված մարմինը լիցենզավորող մարմնի՝ լիցենզիա տալու մասին որոշումը



սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում լիցենզավորված անձին է հանձնում լիցենզիան՝ լիազորված մարմնի լիցենզավորման գործակալության պետի ստորագրությամբ և այդ մարմնի՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կնիքով:

**(6-րդ կետը խմբ. 07.06.12 N 717-Ն)**

7. Լիազորված մարմինն իրականացնում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ լիցենզավորող մարմնի բոլոր լիազորությունները՝ բացառությամբ լիցենզիա տալու կամ լիցենզիա ստանալու մասին հայտը մերժելու, լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու կամ լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման մասին հայտը մերժելու, լիցենզիան վերաձևակերպելու, լիցենզիան վերաձևակերպելու մասին հայտը մերժելու, գործունեության իրականացման վայրի փոփոխման կամ այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու մասին հայտը մերժելու կամ բավարարելու, լիցենզիայի գործողությունը կասեցնելու, լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը քննելու և որոշումներ ընդունելու լիազորությունների:

8. Լիցենզիան վերաձևակերպվում է, և դրա գործողությունը կասեցվում ու դադարեցվում է օրենքով սահմանված կարգով:

## **II. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

9. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան՝ հանրության առողջության, անվտանգության ու պաշտպանության նպատակով թմրամիջոցների արտահանման կամ ներմուծման կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների համար սահմանվում են պարտադիր պահանջներ և պայմաններ:

9.1. Լիցենզիա ստանալու մասին հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անձնությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիցենզավորող մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին առաջարկում է 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները:

**(9.1-ին կետը լրաց. 06.03.14 N 239-Ն)**

10. Հայտատուն, համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտահանման կամ ներմուծման կամ մեծածախ առևտրի իրականացման գործունեության իրականացման լիցենզավորման համար լիազորված մարմին է ներկայացնում՝

1) լիցենզիա ստանալու մասին հայտը՝ համաձայն N 1 ձևի.

2) **(ենթակետն ուժը կորցրել է 15.09.11 N 1317-Ն)**

3) լիցենզիա ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը՝ նախօրոք վճարված լինելու դեպքում (ներկայացվում է հայտատուի ցանկությամբ).

4) թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների պահպանման համար նախատեսված պահեստի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին վկայականի կամ օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը, իսկ ազդանշանային համակարգով ապահովված առանձնացված տարածքներում պրեկուրսորների պահպանման դեպքում տվյալ տարածքի.

5) տեղեկանք տարածքների (պահեստների) տեխնիկական հագեցվածության մասին, բացառությամբ պահպանման անվտանգությունն ապահովող հատուկ տարաներով կամ կոնտեյներներով պրեկուրսորների ներմուծման ժամանակ առանձնացված տարածքներում պահպանելու դեպքում.

6) տեղեկանք տարածքների՝ ազդանշանային համակարգով սարքավորված լինելու մասին:

**(10-րդ կետը փոփ. 15.09.11 N 1317-Ն, խմբ., փոփ., լրաց. 07.06.12 N 717-Ն, խմբ., լրաց. 06.03.14 N 239-Ն)**

11. Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտահանման կամ ներմուծման կամ մեծածախ առևտրի իրականացման գործունեության իրականացման լիցենզավորման համար անհրաժեշտ պայմաններն են՝

1) Հայաստանի Հանրապետություն կարող են ներմուծվել միայն Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող և ըստ քվոտաների հաշվարկված

թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորներ.

2) լիցենզիա ստացած իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պետք է ունենան թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների պահպանման համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պայմաններին և պահանջներին համապատասխան տարածքներ՝ ներառյալ պահպանման համար պահեստը (բունկեր), բացառությամբ սույն կետի 3-րդ ենթակետով պրեկուրսորների պահպանման համար սահմանված դեպքի: Պահեստի դուռը պետք է լինի մետաղյա, պատուհանները՝ վանդակապատված: Պահեստում պետք է տեղադրված լինեն հատակին ամրացված չիրկիզվող պահարաններ: Պահեստը պետք է ունենա խոնավաչափ և պետք է սարքավորված լինի ազդանշանային համակարգով՝ ձայնային կամ լուսային ազդանշանը պահպանության դիտակետին միացնելով կամ շենքի արտաքին մասին ամրացնելով: Ազդանշանային սարքավորումների էլեկտրասնուցման համակարգը պետք է ունենա պահեստային էլեկտրասնուցման աղբյուր:

3) այն իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, որոնք ներմուծում են պրեկուրսորներ պահպանման անվտանգությունն ապահովող հատուկ տարաներով կամ կոնտեյներներով, պրեկուրսորները կարող են պահպանել նաև ազդանշանային համակարգով ապահովված առանձնացված տարածքներում:

**(11-րդ կետը լրաց. 07.06.12 N 717-Ն)**

12. Լիցենզավորված անձինք իրենց գործունեության ընթացքում կարող են զբաղվել Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների պահպանման, տեղափոխման, իրացման, բաշխման, բացթողման, վերամշակման գործառնություններով՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պարտադիր պայմանները և պահանջները:

13. Թմրամիջոցները կամ հոգեմետ նյութերը կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորներն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից պահպանվում են լիցենզիայում նշված վայրում (պահեստում):

14. Լիցենզավորված գործունեության ընթացքում լիցենզավորված անձի կողմից լիցենզավորման համար սահմանված պարտադիր պայմանների և պահանջների փոփոխման դեպքում (ներառյալ համապատասխան որակավորում ունեցող մասնագետի, տեխնիկատեխնոլոգիական հագեցվածության փոփոխման) լիցենզավորված անձը 15-օրյա ժամկետում լիազոր մարմնին հայտնում է իրականացված փոփոխության մասին՝ կցելով համապատասխան փաստաթղթերը:

**(14-րդ կետը խմբ. 23.10.13 N 1148-Ն)**

15. Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների ներմուծում կամ արտահանում կամ մեծածախ առևտուր իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն պետք է ներկայացնեն եռամսյակային հաշվետվություններ:

### **III. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՍՔԵՐԸ**

**(III գլուխը լրաց. 07.06.12 N 717-Ն)**

16. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է հետևյալ պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում՝

1) ներկայացված փաստաթղթերը թերի են, կամ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ.

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջներին.

3) իրավաբանական անձն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեությամբ.

4) թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների պահպանման համար նախատեսված պահեստը, իսկ պահպանման անվտանգությունն ապահովող հատուկ տարաներով կամ կոնտեյներներով պրեկուրսորների ներմուծման դեպքում ազդանշանային համակարգով ապահովված առանձնացված տարածքները սեփականության կամ վարձակալության կամ ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով չեն պատկանում հայտատուին.

5) սույն կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված լիցենզավորման պարտադիր

պահանջներին և պայմաններին չհամապատասխանելու դեպքում.

6) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների պահպանման համար նախատեսված տարածքների ազդանշանային համակարգով սարքավորված չլինելու դեպքում.

7) (ենթակետն ուժը կորցրել է 06.03.14 N 239-Ն)

(16-րդ կետը լրաց. 07.06.12 N 717-Ն, փոփ. 06.03.14 N 239-Ն)

17. Փաստաթղթերը թերի լինելու հիմքով լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է, եթե դրա մասին պատշաճ ձևով նախագրուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր:

(17-րդ կետը լրաց. 07.06.12 N 717-Ն, փոփ. 06.03.14 N 239-Ն)

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար

Դ. Սարգսյան

Ձև N 1

Հ Ա Յ Տ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՄ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԾ՝ ԴՐԱՆՑ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՆԵՐՄՈՒԾՄԱՆ  
ԿԱՄ ՄԵԾԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ (ԸՆԴՊԾԵԼ ԿՈՆԿՐԵՏ ՏԵՍԱԿԸ (ՏԵՍԱԿՆԵՐԸ) ԼԻՑԵՆԶԻԱ  
ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը խմբ. 06.03.14 N 239-Ն)

1. Իրավաբանական անձի անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը

2. Գտնվելու կամ բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և ինտերնետային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում)

3. Իրավաբանական անձի վկայականի պետական գրանցման

համարը

4. Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վկայականի հաշվառման

համարը

5.  Վճարված է պետական տուրք (նշում կատարվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում):

6. Կից ներկայացնում եմ՝

թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների պահպանման համար նախատեսված պահեստի, իսկ պահպանման անվտանգությունն ապահովող հատուկ տարաներով կամ կոնտեյներներով պրեկուրսորների ներմուծման դեպքում՝ ազդանշանային համակարգով ապահովված՝ առանձնացված տարածքների նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին վկայականի կամ օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը,

տեղեկանք տարածքների (պահեստների) տեխնիկական հագեցվածության մասին՝ բացառությամբ պահպանման անվտանգությունն ապահովող հատուկ տարաներով կամ կոնտեյներներով պրեկուրսորների ներմուծման ժամանակ առանձնացված տարածքներում պահպանելու դեպքի,

տեղեկանք տարածքների՝ ազդանշանային համակարգով սարքավորված լինելու մասին,

թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտահանման, ներմուծման կամ

մեծածախ առևտրի իրականացման լիցենզավորման համար պետական տուրքի վճարման անդորրագիրը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը (կցվում է պետական տուրքը նախապես վճարված լինելու դեպքում, հայտատուի հայեցողությամբ):

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

ազմակերպության տնօրեն  
Նինհատ ձեռնարկատեր)

(ստորագրությունը)

(անունը, հայրանունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 20 թ.

(ծևը փոփ. 15.09.11 N 1317-Ն, խմբ. 07.06.12 N 717-Ն, 06.03.14 N 239-Ն)

Ձև N 2

Հ Ա Յ Տ

Լ Ի Ց Ե Ն Ձ Ի Ա Ս Ս Ա Ն Ա Լ ՈՒ Մ Ա Ս Ի Ն

(ծևն ուժը կորցրել է 06.03.14 N 239-Ն)  
(հավելվածը փոփ. 15.09.11 N 1317-Ն, խմբ., փոփ., լրաց. 07.06.12 N 717-Ն, խմբ. 23.10.13 N 1148-Ն, խմբ., լրաց., փոփ. 06.03.14 N 239-Ն)

Հավելված N 4  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
մարտի 18-ի N 281-Ն որոշման

Ձև N 1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Ձ Ի Ա Կ - XX - 000000

րված \_\_\_\_\_ 20 թ.

ործունեության տեսակը \_\_\_\_\_

րավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը \_\_\_\_\_

Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սիմանած՝ դրանց պրեկուրսորների պահպանման համար նախատեսված պահեստի, իսկ ահպանման անվտանգությունն ապահովող հատուկ տարաներով կամ կոնտեյներներով թեկուրսորների ներմուծման դեպքում՝ ազդանշանային համակարգով ապահովված ռանձնացված տարածքների պահպանման գտնվելու վայրը

ործողության ժամկետը \_\_\_\_\_

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ

(ստորագրությունը)

Կ. Տ.

(ծնդ խմբ. 07.06.12 N 717-Ն)

Ձև N 2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԼԻՑԵՆԶԻԱ Կ-XX-000000

րված \_\_\_\_\_ 20 թ.

ործունեության տեսակը \_\_\_\_\_

նհատ ձեռնարկատիրոջ ազգանունը, անունը, հայրանունը և բնակության վայրը \_\_\_\_\_

մրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության  
սիմանաձև՝ դրանց պրեկուրսորների պահպանման համար նախատեսված պահեստի, իսկ  
ահպանման անվտանգությունն ապահովող հատուկ տարաներով կամ կոնտեյներներով  
րեկուրսորների ներմուծման դեպքում՝ ազդանշանային համակարգով ապահովված  
ռանձնացված տարածքների պահպանման գտնվելու վայրը \_\_\_\_\_

ործողության ժամկետը \_\_\_\_\_

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ

(ստորագրությունը)

Կ. Տ.

(ծնդ խմբ. 07.06.12 N 717-Ն)

(հավելվածը խմբ. 07.06.12 N 717-Ն)

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար

Դ. Սարգսյան